Զ. ՏԱՐԻ 1560 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 8 ԱՐԵԳ 4381 — Հ. Տ. 16 ՄԱՐՏ 1889 — Ն. Տ. 28 ՄԱՐՏ 1889 — ՀԻՃՐ. 25 ՐԵՃԷՊ 1306 — ՀԻՆԳՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՐ Զ՝ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՎԵԼՔ-Ի ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌ولك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Հայոց Տարեկան գահեկան մարմար		160
» » Վեցամսեայ	»	80
» » Եռամսեայ	»	40
Գաւառաց » Տարեկան	»	200
» » Վեցամսեայ	»	100
Օտար երկիրներէ տարեկան գրանցք		56
» » Վեցամսեայ	»	28

Դուրս զրկուած լրագրոյ ճամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան զրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 15 ՄԱՐՏ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԵՆԱՎԱՃԱՌՆԵՐՈՒ ԽՆԴԻՐՆ

ՀԱՆՐԱԾԻՈՑ ՄԵՆԱՎԱՃԱՌԸ

Ֆրանսայի Երեսփոխանաց Ժողովոյն մէջ տեղի ունեցած կարեւոր վիճաբանութիւնը, զոր երէկ մեր ընթերցողաց ներկայացուցինք, օրուան խնդիր ըրած է ապրանաց մենավաճառութիւնն և համադրաւորութիւնն։

Անգլիոյ մէջ, հանրային կարծիքը շատ յուզուած է հանքածխոյ վաճառականութիւնը խմբակի մը (trust) ձեռաց մէջ համախմբելու խորհրդոյ մը պատճառաւ։ Պղինձի ֆրանսական մենավաճառին անյաջող ելքը պահ մը ազդած էր անգլիական խորհրդին վրայ, որ կը կարծուէր թէ պիտի թողուէր։ Բայց Ձիչայրի դաւառին և բոլանդակ Անգլիոյ աղեհանքերուն և աղի գործարաններուն մենավաճառութիւնը ժամանակէ մ'ի վեր խմբակի մը ձեռաց մէջ ամփոփուած է, և այս խմբակի գործողութիւնը յաջողութեամբ պսակուած լինելով, հանքածխոյ մենավաճառին հսկայական ծրագիրն այս միջոցիս կենդանութիւն առաւ։

Այս ձեռնարկութեան հեղինակները երկարաժամանակեայ պայմանագրեր պիտի կնքեն ածխահանքերու տերաց հետ, և անոնց արտադրութիւններն իրենց ձեռաց մէջ ամփոփելով, քիչ քիչ հանքածուխին գինը պիտի բարձրացնեն, գնորդներն հարկադրելով իրենց իշխանութեան ներքեւ մնալ։ Այս ձեռնարկ շատ հոգ կը պատճառէ. դի յայտնի է թէ հանքածուխ ո՛րչափ մեծ դեր մը կը կատարէ այժմեան ճարտարագործութեան և ի մասնաւորի Անգլիացւոց ընտանեկան կեանքին մէջ։ Անգլիոյ կարեւորագոյն լրագիրք ոմանք բացարձակ կը յայտարարեն թէ այսպիսի ծայրայեղ շահադիտութիւն մը պէտք է արգիլուի, իբրեւ վնասաբեր երկրին ընդհանրական շահերուն, եթէ յաջողի, և իբրեւ պատճառ գործաւորական մեծ տագնապի մը՝ եթէ անյաջող ելնէ։ Տէյլի Թէլէկրաֆ, ազատական-պահպանողական թերթի որ բնաւ ընկերվարական հակումներ չունի, կ'ըսէ. «Շատ տարբեր բան է երկրի մը աղն ու պղինձը, կամ հանքածուխը մենավաճառ ընել։ Պէտք է որ այդ շահադիտութեան հեղինակները գիտնան զայս։ Իրենց խորհուրդը կը բաւէ ամենէն յամառ Թորին կամ Պահպանողական անդամ կառավարի Ընկերվարական մը դարձնելու։»

• • •

ԱՂԻ ՄԵՆԱՎԱՃԱՌՆ

Ի Նիւ-Եորք աղի մենավաճառութեան ընկերութիւն մը կը կազմուի, որ Նիւ-Եորքի, Միչիկանի, Քանսասի և ուրիշ տեղերու կարեւոր աղի հանքերն և աղի գործարաններն իւր ձեռաց մէջ պիտի անցուցէ պայմանագրութեամբ, և Անգլիոյ նմանօրինակ ընկերութեան մը հետ համընթաց պիտի գործէ։

• • •

ՊՂԻՆՁԻ ՄԵՆԱՎԱՃԱՌԸ

Փարիզի պղինձի ճախող չահագէտք որոշեցին իրենց ձեռքը գտնուած ապրանքն ի հրապարակ չնետել, դնոյ ծայրայեղ անկումի մը տեղի չտնենալու համար, այլ պղինձի հանքերուն ընկերութեանց հետ բանակցիլ՝ արտադրութիւնները ժամանակ մը նուազեցնելու համար, որպէս զի մի՛ երեալ պղինձը կարենայ ծախուիլ քիչ չատ նպաստաւոր դներով։

Մեծաղաց ֆրանսական ընկերութեան (պղինձի գլխաւոր ընկերութեան) բաժնետերաց ոմանք Փարիզի քաղաքային դատարանին դիմելով, խնդրեցին ընկերութեան լուծումն, որպէս զի՝ եթէ հնար է՝ պաշտօնական անանկութեան մը առաջն առնուի, և կը կարծուի թէ դատարանը դատական հաշուեյարդար մը (liquidateur) պիտի անուանէ։

Պարոնայք Ռոշիլտք կէս-պաշտօնապէս յայտարարեցին Փարիզեան լրագրաց մէջ թէ իրենք պղինձի ֆրանսական ընկերութեան երբեք չեն անդամակցած։

• • •

ԼՈՒԾՈՒՄ ՔՈՆԹՈՒԱՌ ՏՆԷՍՔՈՆԹԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Հավասի Գործակալութիւնը Փարիզի լրագրաց հաղորդց պաշտօնական տեղեկութիւն մը Քոնթուառ տ'Էսքոնթի լուծման վրայ։ Բաժնետէր մը, Պ. Վասալ, որ Քոնթուառի 100 բաժին ունի, առեւտրական դատարանին խնդրագիր մատուցանելով, ընկերութեան լուծումը պահանջեց։ Երկրորդաբար պահանջեց նաեւ առժամեայ մատակարարներու անուանումն, որոց տրուին հարկաւոր իշխանութիւնք՝ պարագային պահանջած տնօրինութիւններն ընելու։ Պ. Ռիչառտէն ի դիմաց բաժնետերաց յայտնեց թէ Քոնթուառը մեծամեծ գումարներ ետ տալու հարկին մէջ գտնուած լինելով, որոց փոխարէն իւր բոլոր դոյզն յանձնած է, բաւական ոյժ չունի իւր գործողութիւններն յառաջ վարելու, և հետեւապէս պէտք է Քոնթուառը լուծեալ հռչակել՝ հաշուեյարդարներ անուանելով։ Բայց եթէ դատարանն այսպիսի հրաման մը չընէ, կը խնդրուի առժամեայ մատակարարներ անուանել, որք բաժնետէրերն ի ժողով հրաւիրելով՝ նոր ընկերութեան մը յանձնեն արդի ընկերութեան բոլոր յարաբերութիւններն ու գործակալութիւնները։

Ի դիմաց Քոնթուառի դժբախտ վարչութեան անդամից, Պ. Սապաթիէ յայտարարեց թէ սոքա պատրաստ են իրենց իշխանութիւնն յանձնել դատարանին կողմէ անուանելի մատակարարներուն։ Այդ դարաձգելու համար բաժնետերաց ժողովոյն չդումարուիլն, որ ընդհանուր դժգոհութիւն պատճառած է ընդդէմ վարչութեան Քոնթուառի, Պ. Սապաթիէ ըսաւ թէ վարչութեան բոլոր հոգածութեան առարկայն եղած էր վճարմանց դադարման առաջն առնուլ, և քանի որ ծանուցումէն մէկ ամիս ետքը միայն կը բնար գումարուիլ բաժնետերաց ժողովը, կարելի չէր այնչափ ժամանակ երեսի վրայ թողուլ ընկերութիւնը։

Դատարանն որոշեց թէ կարելի չէ Քոնթուառի ընկերութիւնը լուծել քանի որ կանոնագրին համաձայն բաժնետերաց հաւանութիւնը չէ առնուած, և առժամապէս վարչութեան գործերն յանձնեց առ Պ. Լամոն Մորբ, հաշուեյարդար ընկերութեանց՝ Սէնի առեւտրական դատարանին կցեալ, և առ Պ. Մօնշիքուռ, պաշտօնական հաշուագէտ Փարիզի վճռաբանիչ ատենին, որք բաժնետերաց ժողովը պիտի գումարեն։ Սա լուծեալ պիտի հրաչակէ ընկերութիւնն, և վերջնական հաշուեյարդարները պիտի ընտրէ։

Այս է ուրեմն արդի վիճակն Քոնթուառին, որոյ բաժինք, յետ այս պաշտօնական տնօրինութեան, 120 ֆր. էն ալ վար ինկան, և 100 ֆր. է պակաս են այժմ։

Եթէ այսպէս երթայ, նոր Քոնթուառը չկազմուած հին Քոնթուառին բաժնետերաց ձեռքը բան չպիտի մնայ։ Եւ տրամաբանօրէն ալ այնպէս պէտք է լինի, քանի որ գրեթէ ամբողջ դոյքը դրաւեալ է ի հաշիւ 140,000,000 ֆր.ի փոխատուութեան։

• • •

ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎ ԵՒ ՍԵՂԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Երեսփ. ժողովոյ մէջ Պ. Լօռի յայտնած վիճաբանութիւնը շատ դէշ տպաւորութիւն ըրաւ հրապարակին վրայ, քանի որ հասարակաց վստահութիւնն ևս առաւել խախտելու բնութիւնն ունէր։ Թէ՝ հանրապետական և թէ միապետական չափաւոր լրագրիրք կը դատապարտեն Պ. Լօռի և համախոհից գործածած երկիւղալի լեզուն։

Ցարդ Պուլանժէականք զգուշացած էին հարուածելէ հրեայ սեղանաւորներն, ի յարգանս առ Պ. Նաբէ, Պուլանժէ զօրավարի Վարչապետն, որ հրեայ ցեղէ է։ Բայց պղինձի չահադիտութեան վրայ յարձակում մ'ընելու գեղեցիկ պատեհութիւնը չէին կրնար ձեռքէ փախցնել։

ԿՈՄՍ ՓԵԹԵՐ ՇՈՒՎԱԼՈՎ

Երէկ ծանուցին զԿոմս Փ. Շուվալովի մահը։ 1828 ին ծնեալ, 36 տարեկան հասակին մէջ զօրավար եղաւ։ Պալթիկեան դաւառաց կուսակալութիւն ըրաւ, և 1866ին պետ եղաւ Կայսրութեան գաղտնի ոստիկանութեան, գլուխ հռչակաւոր «Երրորդ Բաժնին»։ Եօթն տարի վարելով սոյն փափուկ պաշտօն, Ալէքսանդր Բ.ի մտերիմ եղաւ։ Երբ Ռուսք Խիվայի վրայ կ'արշաւէին, կոմս Շուվալով Լոնտոն զրկուեցաւ՝ Անգլիոյ դիւրազգածութիւնն մեղքելու։ Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ պատերազմի վտանգը փարատեցաւ, և կոմսը Լոնտոնի դեսպան եղաւ, 1873 էն մինչեւ 1879, ռուսութեան բպատերազմի ժամանակ։ Ակսթէֆանոսի Դաշնագրին կնքումն յետոյ, 1878 ին, երբ արտաքին գործոց նախարար և խաղաղասէր Լորտ Տէրպի հրաժարեցաւ՝ Լորտ Պիքընսֆիլտի պատերազմասէր անօրինութեանց պատճառաւ, կոմս Շուվալովն էր որ դաղտնապէս բանակցեցաւ Լորտ Պիքընսֆիլտի և Լորտ Սալիսբրիի հետ, և կնքեց հռչակաւոր դաղտնի Ցիշատակագիրը, զոր Անգլիոյ պատգամին գործոց պաշտօնական գրագրի մը անխորհրդապահութիւնն յերեւան հանեց։ Այդ Ցիշատակագրով պատերազմին առաջքը կ'առնուէր, և Պերլինի Վեհաժողովին յառաջ Անգլիա և Ռուսիա իրենց մէջ կը համաձայնէին։ Կոմս Շուվալով Վեհաժողովին մէջ Կորչաքոֆ իշխանին հետ Ռուսիոյ լիազօրն եղաւ։ բայց Վեհաժողովն և մանաւանդ Ալէքսանդր Բ.ի մահն ի վեր երեսէ ինկած էր։ որովհետեւ արդի Կայսեր օրով Ռուսիոյ քաղաքագէտք և հրապարակագիրք բուռն դժգոհութիւն յայտնեցին Ալէքսանդր Բ.ի եւ Կորչաքով իշխանի ձախող դիւանագիտութեան դէմ, որով իբր թէ Ռուսիա իւր յաղթութեանց օրինաւոր արդիւնքէն զրկուեր է, չափազանց զիջումներ ընելով Անգլիոյ և Գերմանիոյ։ Բայց աշխարհ չի կրնար մոռնալ թէ կոմս Փեթեր Շուվալով իւր հաշտարար քաղաքականութեամբ մեծ ծառայութիւն մատոյց Եւրոպիոյ խաղաղութեան։

ՀԱՐՈՒԱԾ ՄԸ ԱՌ ՊՈՒԼԱՆԺԷ

Մէջի նախորդ երեսփոխան Պ. Անթուէն մարտ 22ին հայկերոյթ տուաւ բազմաթիւ երեսփոխաններու և ծերակուտականներու։ Բանախօսութեամբ մ'ըսաւ թէ Ալլաս-Լոռէնի խորին վիշտ և յուսահատութիւն կը պատճառէ Ֆրանսայի ներքին երկրագործակալ վիճակն, որ արդէն է Ֆրանսայի զօրանալուն, և թէ ինք Ֆրանսա եկած է Ֆրանսացիներուն ըսելու համար թէ «Դադրեցէ՛ք ինքզինքնիդ չարչրկելէ և գիրար ըզկանէ։ Պաշտպանեցէք զՀանրապետութիւնն և պահեցէք ազատութիւն, որ ամենայն ինչ յուսալ պիտի տայ ձեզ, և կարելի պիտի ընծայէ ձեռնարկութիւններ, որք վտանգալից և մահաբեր կ'երեւին երկրին։ Ալլաս-Լոռէնն կը տառապի ձեր գժտութիւններէն, և պիտի կորնչի ձեր եղբայրասպան երկպառակութեանց պատճառաւ։»

Ալլաս-Լոռէնի այս հայրենասէր ներկայացուցիչն ըսաւ հանրապետական խմբագրի մը։

«Դեռ այսօր չեմ հաւնար թէ ի՛նչպէս Զօր. Պուլանժէ իւր զօրապետի ուսնոցը թողուց երեսփոխանի շքանշանը կախելու համար։ Ո՛չ։ Երբեք չեմ. կրնար ընդունիլ զայս։ Ալլասի մէջ երբեմն ամենքս ալ Պուլանժէական էինք, և ես ամենէն առաջ։ Ա՛հ, բայց այսօր ամեն ինչ վերջացած է։ Եւ շատ տխրեցանք երբ պաղեցանք Պուլանժէէ, մեզ որ «վրէժխնդրութիւն» ևեթ կը բաղձանք։ Եւ այդ վրէժխնդրութեան դասը Պուլանժէ կը լքանէ՝ քաղաքական ունայն փառասիրութեան մը փոխարէն։»

Պ. Անթուէն կը պատմէ թէ Զօր. Պուլանժէի դործոն ծառայութենէ հանուելու վիջոցին Փարիզ գտնուելով, ինք զնաց խնդրել զօրավարէն որ ներում խնդրէ կառավարութենէն և վերստին գործոն ծառայութեան մէջ մտնէ։ Զօրավարն յայտարարեց թէ երբեք չպիտի հնազանդի կառավարութեան։ Պ. Անթուէն մեկնեցաւ ըսելով. «Ուրեմն, զօրավար, ցտեսութիւն չեմ ըսեր այլ ևս, այլ միա՛ք բարեաւ»։ Այն ժամանակէն ի վեր Պ. Անթուէն հակապուլանժէական մ'է։

Լրագրիրք ոմանք կ'ըսեն թէ Մեէի նախորդ երեսփոխանը Փարիզի մէջ պիտի հիմնէ նոր «Հայրենասիրաց Դաշնակցութիւն» մը, որ միակ նպատակը պիտի լինի Ալլաս-Լոռէնի աղատագրման աշխատիլ։

ԴԷԳԵՐԵՆ Ի ՍԵՐԲԻԱ

Երբ Միլան թագաւոր անձայն անչշուկ կը մեկնի երկրէն, որոյ վերայ 16 տարիէ հետէ կ'իշխէր, հոն կը վերադառնայ յաղթական նախկին հրոսապետ մը, զոր Միլան թագաւորի կառավարութիւնն իբրեւ եղեռնագործ աւազակապետ մը կը նկատէր և ձեռք անցուցնելուն պէս հրացանի բռնել տալ կը խորհէր։ Այս մարդն է Պ. Փաշիչ, սահմանագիծոց ազատամարական արկածներուն հերոսն, որուն ներում չնորհել՝ խնամակալութեան առաջին գործերէն մին եղաւ։ Արմատականք իրենց ճշմարիտ պերճ կը հռչակեն զՊ. Փաշիչ, զոր դիմաւորելու համար երկու շոգենաւեր, ուսանողներով և սերգ երիտասարդութեան ընտրելագոյն ներկայացուցիչներով լի, Դանուբի վրայ ընդ առաջ գացին։ Պէլկրատի քաղաքապետութիւնը կամ նախարարական պաշտօն մը պիտի տրուի առ Պ. Փաշիչ, հանանօրէն երկրագործական նախարարութիւնը, «թէև, կ'ըսէ Թայմի թղթակից մը, Պ. Փաշիչ երկրագործութեան վրայ իւր բոլոր հմտութիւնները գործնական եղանակաւ մը միայն կրնայ ստացած լինել,—արշաւասոյր վազելով անցնելով մշակեալ արտերու մէջէն, ամեն անգամ որ ոստիկանք զինք կը հալածէին աւազակութեան արարքներու հաշիւը տալու համար պատժական դատարանին։»

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Աչինովեան խմբին ֆրանսական նաւուց կողմէ թնդանօթի բռնուելուն մնրամասն պատմութենէն կ'երեւի թէ, եթէ Աչինով յանցաւոր է աւելի կամ նուազ, Ֆրանսացիք ևս աճապարանօք գործելու սխալին մէջ գտնուած են։ Հետեւապէս, Ֆրանսայի կառավարութիւնը նոր դոհացում մ'ևս տուաւ Ռուսիոյ՝ քաղաքաւոր ձեւի մը տակ պաշտօնական ընելով զՊ. Լակատ, կառավարիչն Օպոքի։

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պուլկար կառավարութիւնն հրատարակութեան տուաւ պաշտօնական տեղեկագիր մը Պուլկարիոյ մէջ ազատակութեան ընչման վրայ։ Այս տեղեկագրով կը յայտարարուի թէ վերջին երկուց տարուոյ մէջ ազատակոց գրեթէ ամեն խմբեր բռնուած են։ 18 աւազակներ կախուած են, և իբր 100 աւազակներ ալ հինգէն մինչեւ 15 տարուոյ չղթայակապ աշխատութեան դատապարտուած են։ Վեց աւազակաց խումբն, որք 1886 ին կողոպտեցին աւստրեան դեր-հիւպատոսն, այս օրերս բռնուեցան, և որովհետեւ 23 տարբեր ոճիրներով ամբաստանեալ են, կ'երեւի թէ ամենքն ալ պիտի կախուին։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՀՈԼԼԱՆԴԱ

Բրուսիոյ Ալլբերէխտ իշխանը քանի մ'օրէ ի վեր հիւր կը գտնուի Հոլլանտիոյ թագաւորական գերդաստանին քով, և խօսք կայ թէ գերման քաղաքականութիւնը կը ջանայ ամուսնութիւն մը կարգադրել ընդ մէջ Ալբերէխտ իշխանին և Վիլհելմին իշխանուհւոյն, առաջիկայ թագուհին Հոլլանտոյ, որ հայրը մահամերձ է։ Իշխանուհին 13 և իշխանը 15 տարեկան են, և այժմէն կրնան նշանուիլ։ Անցեալ օր գրեցինք Հոլլանտան Գերմանիոյ հետ միացնելու գերմանական խորհրդին վրայ, և Հոլլանտացիք որք սերտիս կապուած են իրենց քաղաքական անկախութեան և ազգային ինքնօրինութեան, գժգոհութեամբ կը տեսնեն և կը մերժեն այդպիսի տմանութեան մը դաղափարը։

ՔԱՆԻ ՄԸ ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐ

Ֆրանսիոյ Հանրապետութեան Դաշնակցային Խորհուրդը գլխաւոր Տէրութեանց հրաւէր ուղղեց մասնակցելու Արհեստագործական Համաժողովոյ մը, որ առաջիկայ սեպտ. ամսուն մէջ պիտի գումարի, սա խնդիրները քննելու համար։ (Ա.) Կիրակի օրերն ամեն տեսակ աշխատութեանց բացարձակ արգելումն, յօդուտ գործաւորաց։ (Բ.) Որոշում այն տարիքին յորմէ վար գտնուող տղայք չաշխատին գործարանի մէջ։ (Գ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Դ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ե.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Զ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Է.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ը.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Թ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժա.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժբ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժգ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժդ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժե.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժզ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժէ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժը.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ժթ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ի.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իա.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իբ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իգ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իդ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իե.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իզ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իէ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իը.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իթ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իա.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իբ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իգ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իդ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իե.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իզ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իէ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իը.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Իթ.) Գործաւորաց ամսական նուազագոյն աշխատանքի մը հաստատումն։ (Ի

բաններու մէջ։ (Գ.) Որոշում թէ դեռատի գործաւորներ օրը քանի՛ ժամ պէտք է աշխատին առ առաւելն։ (Դ.) Արդեւում կանայց և մանկանց աշխատութեան՝ վտանգալից և վատառողջ գործերու մէջ։ (Ե.) Նահմանափակում գիշերային աշխատութեան ի մասին կանայց և մանկանց։ (Զ.) Որոշումներ միջոցներու որովք պիտի ապահովուի համաժողովոյն եղրակացութեանց գործադրումը։

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ

Մարտ 29ին ի հրապարակ պիտի ելնէ 700 միլիոն ֆր. ի 4% ռուս փոխառութիւնն երկամուղեաց, որ յատկացեալ է վճարելու 5% փոխառութիւններն 1870, 71, 72, 73 և 84 տարւոց։ Ի Փարիզ Ռոչիլտեան եղբարք պիտի բանան ստորագրութիւնն, և հանման գինն է 89¾ առ 100, կամ մէն մի թուղթը 448 ֆր. 75 սանթիմ։

ՊԱՐԳԵՒԱՒՈՐ ԹՈՒՂԹԵՐ Ց'ԱԻՍՏՐԻԱ ԵՒ ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ

Աւստրիոյ Երեսի. ժողովին ելմտացոյցի յանձնաժողովն անփոփոխ ընդունեց ելեւտական նախարարին արդելիչ ծրագիրը պարզեւաւոր պարտատոմսերու շրջաբերութեան վրայ։ Նախարարն յայտարարեց թէ պարզ զուգադիպութեամբ մ'է որ այս օրինագիծ Խորհրդարանին կը մատուցուի հելլենական պարզեւաւոր փոխառութեան ծանուցման հետ։

Թէեւ կ'ըսուի թէ հելլենական նոր թուղթին շրջաբերութեան համար Աւստրիա բացառութիւն պիտի ընէ, բայց Աթէնքի լրագիրք բուռն յօդուածներով կը պախարակեն Վիեննայի կառավարութեան բրած տնօրինութիւնն, որ, կ'ըսեն, նպատակ ունի միայն հելլենական նոր փոխառութեան վնասել։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

Խառն ժողովն ի նիստ գումարեցաւ երէկ ի Խորհրդարան Ղալաթիոյ, ընդ նախագահութեամբ Ամն. Ս. Պարիարք Հօր և ատենապետութեամբ Վսեմ. Մաքսուտ Սիմն պէյի։

Ժողովը կարդալով Մայր Եկեղեցւոյ Թագական Խորհրդոյ հրաժարագիրն, ընդունեց զայն իր պարզ հրաժարական, առանց նկատողութեան առնլու անոր պատճառաբանութիւնները, և Ամն. Ս. Պարիարք Հօր յանձնեց առժամեայ Թագական Խորհրդոյ մը կազմութիւնը։

Որոշեց շրջաբերական մը ուղղել մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիները, ծանուցանելով որ բաց ի իւրաքանչիւր եկեղեցւոյ քարոզչէն, ուրիշ որ և է եկեղեցական չ'կրնար քարոզ խօսիլ եկեղեցւոյ մը մէջ, առանց ի ձեռն ունենալու պատրիարքական հրամանագիր մը։

Վաւերացուց Կարնոյ առաջնորդական տեղապահ Արծենեան Տ. Գրիգոր քահանայի ընտրութիւնը։

Նկատողութեան առնլով Տիգրանակերտի ազգայնոյ կողմէ մատուցեալ հանրագիր մը որով կը խնդրեին վերադարձնել իրենց նախկին առաջնորդ Նաճատեան Դեր. Փիլիպպոս եպիսկոպոսն, որոշեց գրել ի Տիգրանակերտ թէ Փիլիպպոս եպիսկոպոսի վերադարձն անկարելի է ինչ ինչ նկատումներով։

Ժողովն ընթերցաւ Մշոյ Ս. Կարապետի վանուց միաբանութեան մէկ գիրն որով շնորհակալութիւն կը յայտնէին վիճակին առաջնորդական տեղապահ Արժ. Տ. Ներսէս վարդապետ Խարխանեանի բարւոք պաշտօնավարութեանն համար։

Որոշեց կրկին հրահանգ տալ ԸՀ-միւռնիոյ պատրիարքական փոխանորդ Արժ. Տ. Յովսէփ վարդապետին, ի մասին վերակազմութեան տեղւոյն Գաւառական Ընդհանուր ժողովոյ։

Ժողովն զբաղեցաւ նաեւ կարգ մը ուրիշ խնդիրներով։

ՀՐԱՒԷՐ

ԱՌ. ԱԶԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆՍ

Ազգային Ժողովոյ ԺԲ. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ուրբաթ, 17 Մարտ, ի Խորհրդարան Ղալաթիոյ։

Առանձը պիտի բացուի ժամ ճիշդ 7 ին և փակուի 10ին։

Կը հրաւիրեմք Ազգային Երեսփոխանները որ հաճին ներկայ գտնուիլ։

Մնամք աղօթարար

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ

ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

14 Մարտ 1889

ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Երկամեայ համաձայնութիւն նախորդ Կրօնական Ժողովոյ։

Բ. — Առաջարկութիւն նախորդ Քաղաքական Ժողովոյ՝ Սովելոց դպրաբեալ Ծանձնաժողովոյ յաւելեալ գումարն արհեստական կրթութեան յատկացնելու մասին։

Գ. — Ծրագիր Առաջնորդական վիճակաց վերակազմութեան։ (Տեղեկագիր Ազգ. Վարչութեան)։

Ատենադպիր

Մ. Ց. ՄԵԼԻՔԵԱՆ

ՅԱՐԵՄ՝...

Այս առաւօտ Բարիզէն ստացանք հետեւեալ երեք թղթակցութիւնները զորս կը հրատարակենք մեծաւ ուրախութեամբ։

ԲԱՐԻԶ, 24 մարտ 1889

Զարմանօք ընկալանք ձեր օրաթերթին միջոցաւ այն տխրահիր ու անակնկալ լուրն որ Տաղաւարեան էֆէնտիի մահը կը գուժէր Բարիզանակ համբէն ազգայնոցս։ Այդ ատենեան սխալ ու անտեղի լրոյն մասին մեծ է մեր ցաւն։ զի Տաղաւարեան էֆէնտի ոչ թէ կենդանի է այլ տակաւ առ տակաւ իւր հիւանդութենէն ապաքինման վրայ է. ուստի կը խնդրենք ի ձէնջ ներկայս հրատարակել ձեր օրագրոյն ամենամօտ մի թուոյն մէջ ի լուր իւր համայն ազգականաց ու բարեկամաց և մանաւանդ իւր հաղորդակցաց որ իւր երեւակայական ամենամեծ կարողութեամբն աճապարած է հաղորդել այդպիսի անհեթեթ լուր մը։

Ն. ԷՍՄԷՐԵԱՆ

* * *

ԲԱՐԻԶ, 24 մարտ 1889

Ամենամեծ զարմանօք կարդացի ձեր լրագրոյ 1551 թուոյն մէջ Նազարէթ էֆէնտի Տաղաւարեանի մահուան գոյժն։

Բարեբախտ էք, որ կարողացած էք ունենալ այնչափ բարեսիրտ մի թղթակից որ Գէրսէնի Շարթօսի խմբագիրը մեռցնելէ յետոյ, կը բարեհաճի նաեւս զայն թաղել, և միանգամայն խմցնել թէ՝ Բարիզանակ ազգային հանգանակութեան ձեռնարկած են՝ շիրիմ մը կանգնելու համար հանգուցելոյն գերեզմանին վրայ։

Եթէ միւնոյն քաղքին մէջ գտնուած չը լինէի, և եթէ մի քանի օր յառաջ Տաղաւարեանի տեսութեան գացած չը լինէի յՕթէլ-Տէօ, ես ես Զեզ նման պիտի պարտաւորէի հաւատ ընծայել պատուարժան թղթակիցնուդ ցնորեալ խելալրութեան։

Բարեհաճ Տաղաւարեան էֆէնտին ՈՂՋ է, եւ Կ'ԱՊՐԻ։

Ամենամեծ ուրախութիւն է նա եւս ինձ, ներկայիս իմացնել իր ճշմարիտ բարեկամաց որ Ադամեան վարժարանի նախորդ տեսչին հիւանդութիւնը տկարացած և վտանգն անհետացած է։

Խնդրեմ փութացէք հրատարակութեան տալ զայս, յանդգնութիւն բարեկամական վշտացեալ սրտերու։

Կ. ԲԷՀԼԻՎԱՆԵԱՆ

* * *

ԲԱՐԻԶ, 24 մարտ

Զարմացմամբ կարդացի ձեր ամսոյս 6/18 թուականաւ երկուշաբթի աւուր թերթին որու մէջ Տիար Ն. Տաղաւարեանի մահուան գոյժը կուտաք սեւ շրջանակի մէջ առնլով։

Ներկայիս կուգամ հերքելու այդ սուտ լուրն. Տիար Տաղաւարեան դեռ ՈՂՋ է, մեծ յոյս ունինք կատարեալ առողջանալուն, և արդէն բժիշկն ըսաւ թէ մէկ քանի օրէն ոտքի կ'ելլէ. նաև ըսուած է թէ Շարիթէի հիւանդանոցն էր. բոլորովին սխալ է այդ, բնաւ այդ հիւանդանոցը գացած չէ, միայն իւր բնակարանը ձգած ժամանակ Օթէլ-Տէլօի հիւանդանոցը գնաց՝ ուր կը գտնուի այժմ լաւ վիճակի մէջ։

Զեմ գիտեր ի՛նչ տեսակ թշնամութենէ մղեալ այս տեսակ սուտ լուր մը հրապարակ ելած է։ Արդեօք ի՛նչ տեսակ ցաւ զգացին իւր հոգին, բարեկամներն և ամենուս հայրը Խրիմեան Հայրիկն որ զնա այնչափ կը սիրէ։

* * *

Այս տխուր լուրն ուղղակի լրագրոյս չէր հաղորդուած, այլ առած էինք զայն մայրաքաղաքս զանազան անձանց հասած անհատական նամակներէ, և կարելի չէր մտքէ անցունել որ այսպիսի մահաբոյր կատակ մը կամ չարաշուք խաբէութիւն մըն էր այդ։

ՄԱՂԹԱՆՔ

ՀՕՆԵԱԼ ԱՌ Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

Վեհ. Սուլթանին գահակալութեան երկոտասանամեայ տարեդարձին առթիւ, ազգային ծանօթ երգահան երաժիշտ Ա. Բրամ էֆէնտի Բժշկեան հեղինակած է չը. գեղ նուագ մը, Արիկեան Միհրան էֆէնտիի խօսքերուն վրայ։ Արուեստագէտը կը փայտն թէ Բժշկեան էֆէնտիի սոյն նոր երկը պատիւ կը բերէ հեղինակին արժանեաց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՈՒՍՈՒՖ ՐԻԶԱ ՓԱՇԱ

Գաղթականաց ընդհանուր վարչութեան նախագահ Եուսուֆ Ռիզա փաշա, որ մէկ քանի օրէ ի վեր հիւանդեր, բոլորովին ապաքինած լինելով երէկ կայս. պալատ գնաց և իւր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնները մատոյց իւր հիւանդութեան միջոցին Վեհ. Սուլթանի կողմէ ցոյց տրուած հոգածութեանց համար։ Եուսուֆ Ռիզա փաշա այս առթիւ Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ և արժանացաւ Ն. Վեհափառութեան մեծարանաց։

ԼԻՑԼԻՅԻ ՄԵՌԱՆ

Վաղը դիշեր Իսլամաց Մուհամ Կիճէսիի տօնը լինելով բոլոր մզկիթները կանթեղներով պիտի զարդարուին եւ կրօնական արարողութիւնք պիտի կատարուին։ Հետեւեալ օրը Նախարարք եւ բարձրաստիճան պաշտօնատարք կայս. պալատ երթալով իրենց շնորհաւորութիւնները պիտի մատուցանեն յոտս կայս. գահոյից։

ՄԵԼԱՆ ԹԱԳԱՒՈՐԸ

Սերպիոյ հրաժարեալ թագաւորը շարաթ իրիկուն մայրաքաղաքս պիտի ժամանէ ճեպընթաց կառախումբով։

Սերպիական դեսպան Պ. Նովաքովիչ, դեսպանատան պաշտօնեայք եւ այլք Սիրքէճիի կայարանը պիտի դիմաւորեն զն. Վեհափառութիւն եւ կառքերով Բեռա Օթէլ մ'Անկլեթէռ պիտի առաջնորդեն։

Սերպիական դեսպանը մատնաւոր հեռագրի մը համաձայն երէկ սրահներ պատրաստել տուաւ նոյն օթէլին մէջ։

Միլան թագաւորը կոմս տը Թագոլօ ծածկանուն ներքեւ կը ճամբորդէ և իրեն կ'ընկերանան իւր մասնաւոր քարտուղարն Պ. Միլիչէվիչ և թիկնապահն հարիւրապետ Պ. Բասիչ։

Բ. ԴՐԱՆ ԵՒ Պ. ՏԸ ՀԻՐՇ

Ինչպէս արդէն ծանուցուեցաւ, Պառոն տը Հիրշ առանց առարկութիւն յարուցանելու կայս. կառավարութեան կը վճարէ հինգերորդ իրաւարարին վճռով որոշեալ գումարն։ Տոկոսաց խնդիրը միայն իրաւարարութեան մը թողուած է, որուն պայմաններն որոշուելուն պէս, Պ. տը Հիրշ Օսմ. Պանքայի Բարիզի ճիւղին յանձնած է վց ու կէս միլիոն ֆրանքի գումարն որ արդէն Բ. Դրան տրամադրութեան ներքեւ դրուած է կանոնաւոր սառացրոյց մը փոխարէն։ Այսպէս Բ. Դրան և արեւելեան երկաթուղեաց շահագործման ընկերութեան միջեւ գտնուած խնդիրը կարգադրուած են ի գոհունակութիւն երկուց կողմանց եւ կը մնայ միայն այդ երկաթուղիները չինող ընկերութեան հաշւոյ կարգադրութիւնն որ բաւական յառաջացած է։ Բ. Դրանն արդէն ընդունած է երկու իրաւարարաց, Պ. Պ. Քէրիի և Պէնուայի ընտրութիւնն, և իրաւարարութեան պայմաններն արդէն որոշուած են ընկերութեան պատուիրակ Պ. Սալէէոյի և Բ. Դրան իրաւագէտ խորհրդականաց միջեւ։ Այս որոշմանդիր պիտի ստորագրուի ընկերութեան լիազօրատէր Պ. Կապլէնի կողմէ, երբ երկու կողմանք որոշեալ գումար մուտանդ թողուն։

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հաֆէզ Խօսրով Ելմտական դարձոյ կանոնաւորութեան համար եղած այն ջանից վրայ որք մէկ կողմէ արդէն ակնկալեալ արդիւնքը կուտան, յուսալից կը գտնէ թէ Ելմտական դարձերը մնաւոր ժամանակի մը մէջ յոյժ կանոնաւոր ընթացք մը պիտի ստանան։ Հաֆէզէն այս առթիւ կը ծանուցանէ Ելմտական նախարարութեան հետեւեալ երկու տնօրինութիւններն։

Ա. Մալիյէի ընդհանուր հաշուակարութիւնն երեք ճիւղերու բաժնուած է, որք են «ընդհանուր հաշուակալութիւն», «կիդրոնական հաշուակալութիւն», և «սէհիմներ ու անձնական ամանթոշակք»։ Այս երիք ճիւղերու պարտականութիւնք եւս առանձին որոշուած են։

Բ. Ելմտական նախարարութիւնն այլ և այլ դեղծմանց առաջքն առնլու համար որոշած է որ Մալիյէի գլուխաց տնօրէնք և օգնականք պաշտօնագրոց ներքեւ իրենց անձնական կնիքները դնեն, փոխանակ պաշտօնական կնիքներու որք ցարդ կը գործածուէին։ Ըստ այս որոշման գլուխաց տնօրէններու և նոցա օգնականաց քով գտնուած բոլոր պաշտօնական կնիքներն հաւաքուած են։

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՆԵԱՆ

Աւստրիական կառավարութիւնը Ֆրանց Եաֆէ պատուանշանի հինգերորդ աստիճանը նուիրած է Սուրիոյ արտաքին յարաբերութեանց դիւանի առաջին քարտուղար Եուսուֆ Թոնուս էֆէնտիի։

ՕՍՄ. ԲԷԹԻՆ

Ելմտական նոր տարւոյն առթիւ, Բէժիի վարչութիւնը ամսականի յաւելումներ և նուէրներ ըրած է հարիւրյիսուն պաշտօնեից։ Այս տնօրինութիւն, որ ինքնին գովելի է, դժգոհութիւն պատճառած է կարգ մ'ուրիշ պաշտօնեից որք կըսեն թէ իրենք մոռցուած են։

—Քասթամունիէն հասած լուրեր կը յայտնեն թէ ծիսատի մշակներու դանդատներն, ընդդեմ Բէժիին, օր աւուր կը սաստկանան։

ՁՕՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԼՆԷ

Պատերազմական նախարարին նախաձեռնութեամբ, Սպարապետի Դուռը լրջօրէն կ'զբաղի օսմանեան դաւառաց մէջ պատրաստուած կարագը տալ զինուորաց։ Այս նպատակաւ նոնյշներ բերուած են Սուրիայէն, Տրապիզոնէն, Պոլսոյեն։ Գիւղացիք, սպառման այս նոր առիթէն քաջալերեալ, անչուշտ նոր մտում մը պիտի տան կարագներու պատրաստութեան և տեսակին բարւոքման գործին։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ Ի ԿՐԷՏԷ

Կրէտէի թագաւորական ընտրութիւնք, որք վերջացած են անցեալ երկուշաբթի, յաւանական կուսակցութեան նպաստաւոր արդիւնք տուած են։ Հակառակ ընդդիմադիր կուսակցութեան բոլոր մեքենայութեանց և բուռն տեսարաններու, կառավարական պաշտպանութիւն վայելող գրեթէ բոլոր անդամք ընտրուեր են։ Եթէ այս արդիւնքները պահպանուին նաեւ ընդհանուր ընտրութեանց ժամանակ, բարեկարգութիւնը պիտի զօրանայ կղզւոյն մէջ և կուսակալութիւնը պիտի կարենայ գործադրել որոշուած բոլոր անօրէնութիւնները։ (Մանչեսթր)

ԻՏԱԼԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՆ

Իտալական դեսպան Պառոն Պլան յառաջիկայ երկուշաբթի ընտանեօք Բարիզ կ'ուղեւորի արձակուրդով։ Ի բացակայութեան Պառոն Պլանի, խորհրդական Պ. Թիւճինի փոխանորդաբար պիտի վարէ դեսպանատան գործերը։

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Երաշխաւորութեան օրինաց 8րդ յօդուածը բարեփոխուած է հետեւեալ կերպիւ։

Յեղուած 8. Երբ պաշտօնէի մը երաշխաւորն մեռնի կամ հրաժարի, պաշտօնեայն պարտի նորս մատուցանել կամ հրաժարման թուականն մինչեւ երկու ամիս ուրիշ երաշխաւոր մը ցոյց տալ։ Նոյն պաշտօնէին այս պայմանաժամու մէջ կատարած գործառնութեանց հաշիւներն անպատճառ պիտի տեսնուին և զանցառութ պատասխանատու պիտի մնան։ Այն պաշտօնեայն որ իւր երաշխաւորը չնորհգեր իրը հրաժարեալ պիտի նկատուի։ Դրամներ գանձելու և պահելու յատկացեալ պաշտօնեայք մինչեւ որ իրենց երաշխաւորները նորոգեն իրենցմէ վեր գտնուող և երաշխաւոր ունեցող պաշտօնեայք պիտի հսկեն նոցա գործառնութեանց վրայ։ Եթէ այդ պայմանաժամու մէջ պաշտօնեայք ոեւէ դրամ խրացնեն իրենցմէ վեր գտնուող պաշտօնեայք եւս պիտի մասնակցին վնասուց տուողաց։

ԱՅԱՆՆԱՅԻ ՆԱՀԱՆԳ

Այս աւուր թուրք լրագրաց մէջ հրատարակուած է հետեւեալ պաշտօնական ազդն։

Անցեալ տարւոյ երաշխութեան պատճառաւ երկրագործութեան և յովսատակի յատուկ մնամնոց վճռաւորութիւն արդիւլուած էր։ Արդ, Աստանայի կուսակալութիւնն, յայտնելէ յետոյ թէ նոյն նահանգին մէջ յետաձգրիկ այս արդելքի շարունակութեան հարկ տեսնուած չէ, խնդրած էր բառնալ զայն։ Բարձր Մեծ-Եպարքոսն, ըստ կայս. հրամանի, ծանուցած է Աստանայի կուսակալութեան թէ այդ արգելքը այլ ևս բարձուած է։

Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարար Վսեմ. Զիւնի փաշայի աղջիկ Թոռն երէկ մեռաւ և յուղարկաւորութիւնը կատարուեցաւ մեծ հանդիսիւ ի ներկայութեան բարձրաստիճան անձանց։

—Կրէտէի վերաքննիչ ատենին նախորդանդամ ձէվատ էֆէնտի երէկ Զմիւռնիայէն մայրաքաղաքս ժամանեց։

—Փոնեան թերթին մէջ կը կարդանք թէ տեղւոյն վերաքննիչ ատենի Հուգոգի ճիւղը կ'զրաղի փաստաբան Պէքիր էֆէնտիի կողմէ տեղւոյն նախնական դատարանի Հուգուգի ճիւղին նախագահ Նիեազի էֆէնտիի դէմ բացուած դատովն։

—Աստանայի Բիստ անուն տեղն անցեալ ամսոյ մէջ սաստիկ փոթորկի մը ծագեր և 2¼ ժամ շարունակեր է։ Փոթորկին սաստկութենէն տուներ վնասուեր և բազմաթիւ ծառեր արմատախիլ եղեր են։

—Սկիւտար, Եէնի Մահալլէ թաղը բընակող Յովհաննէսեան անուն երիտասարդ մը որ 4 տարիէ ի վեր մասային խանդարման ենթակայ լինելով տունէն դուրս չէր ելած, անցեալ ուրբաթ օր փողոց ելած և ցարդ վերադարձած չէ։ Խուզարկութիւնք պատրաստուն ելած են։

—Նիկոմիդիոյ ճանչնիներու ցամաքեցուցման գործողութեան ձեռնարկուեր է այս օրերս, հանդիսաւորապէս, ի ներկայութեան տեղական իշխանութեանց։

—Ֆէլէնթէ շոգենաւն առողջապահական վարչութեան հասած լրոյ նայելով, այդ շոգենաւուն մէջ ուր նաւատի մը մեռած էր, ուրիշ նաւատի մըն ալ մեռեր է և նաւապետն ալ ծանր վիճակի մէջ կը գտնուի եղեր։ Ֆէլէնթէը այժմ Զմիւռնիոյ նաւահանգիստն հեռացուած է։

—Փետրուար ամսոյ վերջերը Սուրիոյ Համիտիյէ գաւառակի շրջակայ գիւղերէ մին երկու կատղած գայլեր կը մտնեն և 15 ի չափ գիւղացիներ և բազմաթիւ տնասուններ կը խածնեն։ Գիւղացիք չորս ժամ աշխատելով կը յաջողին գայլերէ մին սպանել, իսկ միւսը լերան կը փախչի։ Համայն բժիշկներ զրկուած են դարմանելու համար խածուածներու վիրքերը։

—Երեքշաբթի իրիկուն ի Պոլիս Մահմուտ Փաշա հեռաւեալ գէպքը տեղի ունեցաւ։ Հայու մը և հրեայի մը միջեւ առեւտուրի պատճառաւ վէճ մը ծագելով հայը սաստիկ ապտակ մը զարիւ հրէին և այսչափով չբաւականանալով դնաց ոստիկան մը կոչել։ Հայն երբ ոստիկանի հետ վերադարձաւ հրեայն մեռած գտաւ։ Ոստիկանութիւնն անմիջապէս ձերբակալեց հայն։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՑԻ

Այս գիշեր ԲԱՌՄԷՆ

(CARMEN)

Վերջին անգամ ներկայանալի։

ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԹԷՓԷ-ՊԱՅԻԻ

Այս գիշեր տեղի կ'ունենայ Լուսնակոտ Ռոսսիի չորրորդ և վերջընթեր ներկայացումն։ Ներկայանալի խաղն է ՇԱՅԼՕՔ կամ ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Shylock

ou

Le Marchand de Venise

Շեկսպիրի ծանօթ ողբերգութիւնը։

Թէփէ-Պայիի թատրոնի գները զեղչուած են։

Թիկնաթոռք կէս օսմ. ոսկի,

Նստարանք 30 ղրուշ,

Մուտք 10 «

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

կը գտնուին ամէն գրավաճառաց քով

ՊԱՏՏԷՂ ՀՈԴԵՒՈՐ, Աղօթագիրք։ ընտիր թղթի վրայ մաքուր տպագրութեամբ։ կեդրոնատեղի Պէրպէրեան Տպարան, Էսկի Զապիէէ ճամբէսի թիւ 6ի, գին 2 ղրշ։ 383 5—5

ՍՈՒՆԶԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՑ։ Պա սկերազարդ յորինեաց Ա. Մամուրեան գին 2 ղրշ։ կեդրոնատեղի Պէրպէրեան Տպարան։ 384 5—5

ԹՇՈՒԱՌՆԵՐ, Վիդդոր Հիւգոյի, Թարգմ. Գրիգոր Զիլինկիրեան, հրատ. Շշան կ. Պէրպէրեան հատոր է։ 385 5—5

ՄԻՇԼԼԷ կամ Օսմ. Գազ։ Օրինագիրք թարգմ. Նիկողայոս Եֆ. Թոթվաշեան։ Ամբողջ գործը պիտի բաղկանայ հինգ հատորներէ, որոց Ա.ը լոյս տեսած և Բ.ը տպագրութեան յանձնուած է։ կեդրոնատեղին Մամուտ փաշա Պէօյիւք Եըլտըզ խան վերնայարկ թիւ 10։ գին Ա. հատորի 10 ղրուշ։ 299 5—5

ԼԵՒՈՆ ՆԻԶՈՒՄԵԱՆ

ԴԵՐՁԱԿ

Իւր գործատեղին փոխադրած է Կալաթա Վէյսոսա պահականոցի դէմ Իզմիրլի Օղլու խան, Ա. յարկ թիւ 5։

Զաւմի վրայ խիստ ձեւաւոր հագուստներ կը շինուին լաւ կերպասներէ, զեղչեալ գներով։ 382

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՆ ՀԱՎԱՍ

Բարիզ, 27 մարտ

Անգլիոյ Թագուհւոյն և Սպանիոյ Թագուհւոյն տեսակցութիւնն այսօր տեղի ունեցաւ ի Սան-Սեբաստիանօ։ Տեսակցութիւնը շատ սիրալիր և մտերմական եղաւ։

Մէբսիլոյէ հեռագիր մը կ'ըսէ թէ զրօսաշրջիկներու շղթանաւ մը ընկղմեր է Շաբէլլա լճին վրայ և թէ մինչեւ հիմա յիսուն դիակներ հանուած են։

Լոնտոն, 27 մարտ

Պ. Ճոն Պրայթ մեռաւ։

Աթէնք, 27 մարտ

Երեսփոխանաց ժողովն։ — Նախարարապետ Պ. Թրիկուբի Երեսփոխանաց ժողովոյն ներկայեց օրինական ծրագիր մը որ կառավարութեան արտօնութիւն կուտայ 80 միլիոն ֆր. փոխ առնուլ, չենելու համար Պիրէոն-Լարիսայի միջազգային երկաթուղին։ կառավարութիւնն ստնուրդ պիտի դնէ այս երկաթուղւոյն շինութիւնը։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 16 մարտ

Դահեկան

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ		
3 տոկոս Լոնտրայի վրայ (Պանքայի)	110	5/8
3 » » » (վճռակին)	110	1/8
3 » Բարիզի » (պանքայի)	22	90
» » » (վճռակին)	22	97 1/2
Օսմանեան Քոնսոլիտէ		
Երկէ երեկոյ գոց. (Մրցաց. Սերի	16	29 1/2
Պօրսային գոցուելէն վերջը	»	16 29 1/2
Բէրայի մէջ	»	— —
Ադատատուն բացուեցաւ	»	16 29 1/2
Կէս օրին	»	16 30
ԻՍՊԵԳՐԱՁՔ ՏԱՒԻԼԻ		
Երկէ երեկոյ		42 30
Այս առաւօտ		42 30
Կէս օր		42 30
ԸՆԹԱՑՔ ԱՐՔԵՊԼԹՈՅ		
Փոխառութիւն Ա. Սերի		27 30
» Բ. »		16
» Գ. »		16 29 1/3
ԲԱՆԿՈՆՏՈՒՄՈՒԹ		
Օսմէնիէ թէնէրալ Անգլ. Լիր.	4	22
Քրեդի թէնէրալ Օսմ. »	9	1
Պանք տը Ֆոնս » »	7	20
Սօս. Շանէ է վոլէօր » »	4	30
Թրամուէյ » »	470	
Բուսվէլի երկաթուղի ֆր.	50	
Օսմանիէ տը Բրիօրիթէ »	—	—
Բանքնոթուղթ Ղալաթիսի »	107	
ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ		
Օսմանեան ոսկի ղրշ.	100	
20 Ֆրանքոց »	87	36
Անգլիական ոսկի »	110	32
Իմպերիալ »	91	10
Ֆրանգ »	51	15
Բուսպլի թղթադրամ »	8	43
» արծաթի »	77	25
Մէճ. արծաթի (տարբ.) »	168	27
Վենետոց »	103	30
Հինգնոց »	103	30
Մեթալիք »	102	20
Թասֆիյէ »	7	30

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 27 Մարտ ժամ 3 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ	98	5/16
Օսմ. » Սերի Դ. բացուեցաւ	15	1/8
» » » գոցուեցաւ	15	1/8
» » » Ա.	27	1/2
» » » Բ.	15	5/8
» » » Գ.	15	
Օթոման 1871	89	5/1
Փոխառութիւն 1877	101	1/2
Պանք Օթոման	1	5/1
Ռուսական փոխառ. 1873	102	3/4
Եգիպտական միացեալ (իւնիֆիտ)	88	3/4
» առանձ. բրիվիլէժիէ	103	1/4
Տպրա Սանիէ	83	3/4
Տօմանիայ փոխառ. Բօչիլը	102	1/2
Հունգարական պարտատոմսերի 4 %	—	—
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25	524

Վիէննա, 27 Մարտ

Փոխառակութիւն Լոնտոնի վրայ	121	95
Օսմանեան երկաթուղի	24	

Բարիզ, 27 Մարտ ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	104	82 1/2
» » 3 %	85	85
Օսմանեան քոնսոլիտէ Սերի Դ. բացուեցաւ	15	35
» » » գոցուեցաւ	15	30
» » » Բ.	15	
» » » Գ.	15	20
Օսմանեան երկաթուղի	50	
» Բէժիի բաժնեթուղթ	—	—
Պանք Օթոման	548	75
Դրէսմի Լիոնէ Գ. կ.	666	25
» Ֆոնսիէ	1290	
Գոնդու

թէ այն թուականէն մինչեւ 1889 բնաւ տարբերութիւն չկայ հասակին վրայ։

Միթ իշխանն և Լօթի իշխանուհին, զորմէ չխօսեցայ տակաւին, ամենուն ուշադրութիւնը գրաւած են եւ կ'արժէ ընդ երկար խօսիլ անոնց վրայով։

Գալթազար Զիմէրմանն յիշեցի որ Սկովտիոյ մէջ ծնած է և մին է աշխարհիս նշանաւոր գաճաճներուն, այլ եւ նորա ծնողքն երկայնահասակ և եղբարքն միջահասակ են, այնպէս որ իւր ընտանեաց մէջ ինքն է միակ գաճաճն։ բնական մեծութեամբ ծնած, սակայն իւր տասն եւ վեց ամեայ հասակին մէջ գոնէ 9 քիլօ կը կշռէր և 76 հարիւրորդամեթր էր նորա հասակն և հռչակաւոր պուպրիկ կը կոչէին զնա։ իսկ մենք ի՛նչ անուանելու ենք մեր վեսմաշուք այցելու Միթ իշխանն։ կենդանի պուպրիկ մըն է և նա Պօլսեցւոց համար, իւր խարտիշագոյն մազերով, թաւշեայ և վարդաներկ այտերով ու հըրապուրիչ ձեւերով։

Այս կենդանի պուպրիկն ալ ծնողքն բարձրահասակ էին, եղբարքն միջահասակ, ինքն միայն նկնահասակ և սիրուն։

Անառակ մանուկ մըն էր Միթ։ երբ միամեայ տակաւին, տան մէջ կը վազվզուտէր, նոյն պահուն՝ երբ հայրն վրայ կուգար, կը փութար իւր մօր հանչին մէջ պահուռտելու, երբեմն ալ իւր հօր գըՀարկին մէջ կ'աներեւութանար։ այս օր իսկ երբ Նորին Վսեմութիւն խաղալու տենչ մը զգայ, իւր բարձին ներքեւ կ'անհետանայ, մինչ իւր անկողնին ալ հաղիւ մեր անկողնոյ բարձերուն չափ երկայնութիւն ունի։

Երբ Միթ երեւցաւ սրահին վրայ, ժողովուրդն սկսաւ խնդալ, այլ ես չը գիտեմ ինչո՞ւ գայթակղեցայ առ այն։

Մխ Մարթա Պրօն, Մանչէսթրի մէջ ծնած է 1869 փետր. 7ին. հասակին բարձրութիւնն է 69 հարիւրորդամեթր և 5 ½ քիլօ կը կշռէ։

Շօրթ գնդապետն ծնած է Միացեալ-Նահանգաց մէջ 1869 Նոյեմբեր 13ին, 5 ½ քիլօ կը կշռէ և հասակաւ 58 հարիւրորդամեթր է։

Գնդապետն ամուսնացած է, յոյժ վայելչասէր է նա և շնորհափայլ։ Իւր ճամբորդութեանց մէջ ամենուն համակրանքը գրաւած է և ծափահարուած է ի բազմաց։ Դիւրութեամբ կը պարէ և ճշմարիտ հնարիւրեան մը համարւը կը վայելէ։

Տիկին Թօթ, երեցագոյնն է գաճաճներու, զի 89 ½ հարիւրորդամեթր է իւր հասակը և 14 քիլօ կը կշռէ։ 1865 օգոստոս 11 ին ծնած է ի Հերֆօրտ, Անգղիա։

Զօրապետին կինն այժմ Գօլիպռի իշխանուհւոյն և միւս բուրթուկներու ընդհ. վերատեսուչն է։ կառավարին քով նստած էր նա երբ 35 ամեայ պարթեւ հասակաւ անգղիացի մը, որ հաւանականաբար գաճաճներու առաջնորդն է և անոնց բաղդատմամբ կատարեալ հսկայ մը, օգնեց բուրթուկներուն իջանել ի կառաց և զնոա հարիկ հարիկ ներկայացուց հանդիսականաց։

Լեզուագէտ են գաճաճներն և երգեցողք։ ոմանք ի նոցանէ գրագիտութեամբ կ'զբաղին։ գնդապետն և իշխանուհին ուշադրութեան արժանի են վեցոտնեայ վալսերու մասին։

Կառքը դարձեալ կ'անցնի թատերաբարին վրայէն մինչ գաճաճք գնդապետին և իշխանին առաջնորդութեամբ կ'երթան բազմիլ իրենց յատուկ թիկնաթոռներու վրայ։ Հսկայն կը մատչի կառքին ուստի կ'իջնէ փոքրիկն Լօթի իշխանուհին։ ըստպտակաւոր փոքրիկ դէմք մը վարդագոյն այտերով, ոսկի մազերով, փոքրիկ բերան մը նմանապէս վարդաներկ շրթներով և սպիտակ ատամունք, ահա Լօթի բուրթուկն որոյ հասակն 56 հարիւրորդամեթր է գոգցես։ հրապուրիչ աղջիկ մըն է նա որ յառաջիկայ յունիս 4 ին քսաներորդ տարին պիտի թեւակոխէ մինչ այժմ հազիւ 2 տարեկան կ'երեւի նա։ իւր դիմաց վրայ անհնար է նշմարել քսան տարիներու ամենանուրբ ծալքն անգամ։ կարմրագոյն ասուեայ հագուստ մը կը կրէ ժապաւէններով զարդարուած, գլխուն մազերն յարդարած է նմանապէս ժապաւէնով մը որոյ վրայ կը փալփլի ադամանդեայ աստղիկ մը։ Հսկայն կը ներկայացնէ գնա ժողովրդեան, զմայլեցուցիչ նաազնքով մը իշխանուհին կը խոնարհի և կ'սկսի երգել։ երկնասոս նուագ մըն է նորա ձայնը, և յաճախ ձայնը կը նուազի նման սոխակաց դայլայլիկներուն որոց կը յաջորդէ նուազ հեշտալուր ճռւողիւն թռչնոց։

Լօթի երեցագոյնն է իւր եղբարց։ իւր ծնած միջոցին «Լոռ» տուփ մ'առին, բամբակով պատեցին և իբր անկողնի գործածեցին զայն ընդ երկար։ անդ կը ներհէր իշխանուհին։

Հսկայն որ սոսկ մեզ նման արարած մըն է, այլ հասակաւ միայն պարթեւ, հըշմարիտ հսկայ մըն է նոցա բաղդատմամբ։ Լօթի հսկային ափին մէջ կեցաւ ընդ երկար, համբոյրներ շռայլեց ամենուն։ զարմանալին այն է որ այնքան փափկասուն պուպրիկ մը յինքն կը սնուցանէր այդ քաջասրտութիւնն։

Արդեօք օտար աստեղ բնակիչներ են նոքա, որ դիպուածաւ նժդեհ ընկած մեր երկրին մէջ, մոռաբերել կուտան մեզ, մեր հոգւոց աշխարհներն։

Երազ մը չէ այս նկարածս այլ քաղցր իրականութիւն մը։ գիտական թերթի մը հետաքրքրաշարժ մէկ լուրն երբէք չէ գրաւած զիս այնքա՞ն։ դացէք տեսէք և դուք, ընթերցո՛ղք։

Նոցա ընթրեաց սեղանոյն մասնակցեցէք, փոքր չէ եթէ ճաշած լինիք յառաջագոյն, զի նոցա իւրաքանչիւրի ընթրիքն է մրայն պատառ մը միս, մէկ մէջքիկէն մեծութեամբ։

Այլ սակայն։։։ Վարագոյրը կ'իջնէ և բուրթուկները կ'աներեւութանան։

Օրթաքէյ ՅԻՄԻ

15 մարտ

ՊԱՌՆԱՍԵԱՆ ԽԱՂԵՐ

Ա.

